միւս անդամ եմոյծ զիս ի սոյն յայս գործ» (Գլ. ԾԶ.)։ Եւ նա հրաժարուել ու ազատուել չի կարողանում հայրապետի հրամանից, ինչպէս որ «թակարդի մէջ ընկած թռչուն կենդանին չի կարողանում ազատուել թակարդից» (նոյնտեղ)։

Յետոյ, կաթողիկոս Զուղայեցու ծառայութիւնը հայ ժողովրդի լուսաւորութեան գործին մեծ է մանաւանդ նրանով, որ նա դարձ տուեց հայ տպագրութեան արուեստին։ «Նրա օրով պայծառացաւ հայերէն գրքերի տպագրութիւնը» — ասում է Չամչեան։

Մինչեւ այդ, ի հարկէ, հայերն ունէին մի քանի տպարաններ զանազան վայրերում, ինչպէս, օրինակ, Արզար դպրի տպարանը նախ Վենետիկում, յետոյ Կ. Պոլսում, Յովհաննէս Անկիւրացու տպարանը՝ նախ Հռովմում, ապա Վենետիկում, Խաչատուր Կեսարացու տպարանը՝ Նոր Զուղայում եւայլն։ Սակայն այդ տպարանները դեռ եւս շատ նախնական, անզարդացած էին, մասնաւորապէս նրանց տառերը՝ «կարի իմն անձեւ եւ անյարիր»։

Յակովբ կաթողիկոսը, կամենալով զարդացնել հայ տպագրութեան արուեստը եւ ունենալ հայերէն տառերի աւելի գեղեցիկ եւ մաքուր դաղափարներ, որոնում է մի յարմար մարդ՝ Եւրոպա ուղարկելու, որ այնտեղ սովորի տպագրութեան գործը եւ փորագրել տայ աւելի գեղեցիկ ու յարմար հայերէն մայր տառեր։ Այդ ժամանակ Էջմիածնում էր Մատթէոս սարկաւագ Ծարեցին, մի «հանճարեղ» մարդ ըստ Չամչեանի, որը եղել էր Փիլիպպոս կաթողիկոսի քարտուղարը։

Զուղայեցին սրան ուղարկում է Եւրոպա։ Խեղճը շատ երկար թափառում է Իտալիայի զանազան քաղաքներում, գլխաւորապէս Հռոմի եւ Վենետիկ, բայց չի կարողանում մի բան անել — մասամբ հմուտ փորագրիչներ չգտնելու եւ մասամբ էլ դէպի իրեն եղած թշնամական վերաբերմունքի պատճառով, կաթոլիկ հոգեւորականութեան կողմից։ Այդտեղից յուսահատուած անցնում է Հոլլանդիա, ուր վաճառականութեան գործով գտնւում էր Ոսկան վարդ. Երեւանցու եղբայրը՝ Աւետիսը։ Ամստերդամ քաղաքում գտնելով մէկ հմուտ փորագրիչ, Ծարեցին փորագրել է տալիս հայերէն մայր տառեր, հիմնում է տպարան եւ սկսում է գրքեր տպագրել (1660)։ Բայց ծանր պարտքերի տակ ընկած լինելով, իրեն ընկերացնում է յիշեալ Աւետիսին, որը մի գեղեցիկ պատրաստակամութեամբ վճարում է Ծարեցու պարտքերը եւ նրան ու տպարանը հանում նեղ դրութիւնից։

Սա այն տպարանն է, որ յայտնի է «Էջմիածնի ու Ս. Սարգսի տպարան» անունով։ Մատթէոս Ծարեցու մահով՝ Ոսկան Երեւանցին, Զուղայեցու թղթով, Ամստերդամ գնաց եւ տպարանի ղեկավարութիւնը իր ձեռքն առաւ։ Մեծ է, շատ մեծ, այդ տպարանի խաղացած դերը հայ ժողովրդի լուսաւորութեան եւ հայերէն գրքերի հրատարակութեան գործում1)։

Զուղայեցու կաթողիկոսութեան մէկ գեղեցիկ գիծն էլ այն է, որ նա՝ Զուղայեցին, իր ամբողջ կաթողիկոսութեան ընթացքում, մեզ ներկայանում է որպէս մի հայրենասէր հոգեւորական։ Նրա համար հայ ժողովրդի խաղաղութիւնն ու միութիւնը եւ Էջմիածնի աթոռի հեղինակութիւնը բարձր էին ամէն բանից։

Դժբախտաբար, առիթը չուտով ներկայացաւ՝ իր այդ գեղեցիկ առաքինութիւնները հրապարակ բերելու։

Խոշոր դժտութիւն է ընկնում Հայոց մէջ, որը սպառնում է հայութիւնը բաժանել երկու հատուածի, իւրաքանչիւրն իր առանձին կաթողիկոսով — արեւելեան եւ արեւմտեան կամ պարսկահայ եւ օսմանահայ։ Դժտութեան հերոսն էր Եղիազար վարդ. Անթապցին, «այր հզօր բանիւք եւ արդեամբք, ստացեալ զմեծ փարթամութիւն» (Չամչ. Գ. եր. 697)։ Իր փառասիրութեանը յագուրդ տալու համար՝ նա մտքում դնում է լինել ազգի գլուխ եւ կաթողիկոս բովանդակ տաճկահայութեան, իր աթոռը հաստատելով Երուսաղէմում։ Շատերը հայ երեւելիներից, կանխատեսելով հայութեանը սպառնացող վտանգը, աշխատեցին յետ կանգնեցնել նրան իր այդ վատ մտադրութիւնից,

1) Չամչեան, Գ. 659, Լէօ, Հայկ. Տպագր. Ա. 149։